

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ ՄԻՋԱՆԿՅԱԼ ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿՈՒԼՏՈՒՐԱՅԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՊԵՏԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ» ՀԻՄՆԱԴՐԱՄ

Մշտադիտարկման նպատակը.

Մշտադիտարկման նպատակն է հավատարմագրումից հետո «Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ» հիմնադրամի (այսուհետ՝ ՀՖԿՍՊԻ) որակի ապահովման համակարգի առաջընթացի և ինստիտուցիոնալ հավատարմագրման արդյունքում մշակված և հաստատված «Փորձագիտական զեկույցում նշված թերությունների վերացման բուհի ծրագրի» (այսուհետ՝ Ծրագիր) իրագործման միջանկյալ գնահատումը և վերլուծությունը:

Մշտադիտարկման խնդիրները.

- պարզել՝ որքանով է բուհն իրագործում Ծրագրով իր վրա վերցրած պարտավորությունները,
- ուսումնասիրել՝ որքանով է բուհն ապահովում Ծրագրով նախատեսված վերջնարդյունքերը և կատարողականի ցուցիչները,
- գնահատել՝ որքանով է բուհը մոտեցել իր առջև դրված նպատակների և խնդիրների լուծմանը,
- վերլուծել բուհի համար Ծրագրի իրագործման ռիսկայնությունը,
- ՄՈՒՀ-ի որակի ապահովման համակարգի բարելավման համար անկողմնակալ և ամբողջական տեղեկատվության ներկայացնել ՈԱԱԿ-ին և բուհին:

Մշտադիտարկման ընթացակարգը.

- ուսումնասիրվել է ինստիտուցիոնալ հավատարմագրման փորձագիտական զեկույցը,
- ուսումնասիրվել է բուհի Ծրագիրը,
- դուրս են բերվել 2 տարվա կտրվածքով բուհի համար կարևոր խնդիրները,
- ուսումնասիրվել է հավատարմագրումից հետո բուհի կողմից ներկայացված 2 տարվա հաշվետվությունը,
- կազմվել է հետազոտության տրամաբանական մատրիցան,
- կազմվել է բուհ այցի օրակարգը, որը համաձայնացվել է բուհի ղեկավարության հետ,
- ՈԱԱԿ 2 աշխատակիցներ՝ Ա. Մակարյանը և Լ. Պիպոյանն այցելել են բուհ,

- հաստատված օրակարգի համաձայն բուհում անցկացվել են հանդիպումներ ռեկտորի, պրոռեկտորների, որակի ապահովման պատասխանատուների, ամբիոնների վարիչների, դասախոսների և ուսանողների ներկայացուցիչների հետ, ուսումնասիրվել են անհրաժեշտ փաստաթղթերը,
- հանդիպումների ժամանակ որոշակի մեկնաբանություններ և խորհրդատվություն է տրամադրվել անձնակազմին,
- այցի ավարտին բուհի ղեկավարությանը համառոտ տեղեկացվել է մշտադիտարկման արդյունքների մասին:

ԵԶՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆ ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ՄՈՆԻթինգ կողմից հաշվետու ժամանակաշրջանում իրագործվածի համապատասխանությունը խնդիրներին

Բուհի կողմից մշակված թերությունների վերացման ծրագրի և բուհում փաստացի իրականացվող քայլերի վերլուծությունը ցույց տվեց, որ փորձագիտական զեկույցում նշված խնդիրները հիմնականում ընկալվել և կարևորվել են հաստատության կողմից: Բուհի կողմից ձեռնարկվել են համապատասխան փոփոխություններ ինչպես փաստաթղթերի մշակման և լրամշակման, այնպես էլ աշխատակազմի հետ տարվող աշխատանքներում: Այնուամենայնիվ, նկատելի էր, որ նշված բարելավումները դեռևս սկզբնային փուլում են և շոշափելի ազդեցություն դեռևս չունեն լսարանային մակարդակում:

Ծրագրով նախատեսված գործողությունների իրականացման մակարդակը և արդյունավետությունը, փոփոխությունների կայունությունը

Չափանիշ 1. այս չափանիշի շրջանակներում Ծրագրով նախատեսված գործողությունները հիմնականում իրականացվել են բուհի կողմից: Վերամշակվել է բուհի առաքելությունը (թեև վերջինս վերաձևակերպվել էր դեռևս փորձագիտական այցից առաջ (2016թ.)). նոր ձևակերպումը կարելի է համարել առավել մատչելի շահակիցների ընկալման համար (այս մասին նաև նշվել է փորձագիտական զեկույցում), սակայն այս ուղղությամբ վերլուծություն բուհը դեռևս չի իրականացրել: Վերանայվել է ՌԾ նպատակների գնահատման ցուցիչներն, այնուամենայնիվ մշակված ցուցիչներից դեռևս ոչ բոլորը կարելի է համարել իրապես չափելի: Արտաքին և ներքին շահակիցները թեև ներգրավվել են ՌԾ լրամշակման և իրականացման գործընթացներում, այնուամենայնիվ շահակիցների ներգրաման մեխանիզմների արդյունավետության վերլուծությունները բացակայում են:

Չափանիշ 2. չափանիշը փորձագիտական խմբի կողմից գնահատվել է «անբավարար»: Կառավարման և վարչարարության ուղղությամբ բուհի ունեցած թերությունների որոշ մասը հաշվետու ժամանակահատվածում լուծվել է. վերանայվել է բուհի կազմակերպական կառուցվածքը՝ ելնելով ֆինանսական նպատակահարմարությունից և հանգեցնելով ամբիոնների և որոշ ստորաբաժանումների աշխատանքի օպտիմալացման: Այնուամենայնիվ, կազմակերպական կառուցվածքի արդյունավետության գնահատում բուհում դեռևս չի իրականացվել: Մարդկային ռեսուրսների բաժնի կողմից մշակվել են դասախոսական, վարչական և ուսումնաօժանդակ կազմի պաշտոնի հրահանգներ: Մշակվել է կարճաժամկետ և միջնաժամկետ պլանավորման ձևաթուղթ, առկա են պլանների գնահատման մեխանիզմներ: Այնուամենայնիվ, հաշվետվությունների դիտարկումից պարզ դարձավ, որ ձևաթուղթն ունի լրամշակման կարիք՝ ցուցիչների առավել չափելի դարձնելու տեսանկյունից: Որոշակիորեն բարելավվել է որոշումների կայացման գործընթացում արտաքին շահակիցների ներգրավումը, սակայն շահակիցների մասնակցության արդյունավետության գնահատում և վերլուծություններ բուհում դեռևս չեն իրականացվել: Մշակվել է ֆինանսների բաշխման և տնօրինման նոր քաղաքականություն: Թեև բյուջեի հաստատված նախահաշիվը ըստ ռազմավարական գերակայությունների է, այնուամենայնիվ, ելնելով որոշ խնդիրներից, բյուջեով նախատեսված ծախսերը ընթացքում փոփոխվում են (օրինակ՝ վերանորոգման համար նախատեսված ծախսերը ծառայել են դասախոսների վերապատրաստման ֆինանսավորմանը, թեև ամբիոնի վարիչների հետ հանդիպումից պարզ դարձավ, որ հիմնականում դասախոսները մասնակցել են երկրի ներսում իրականացվող վերապատրաստումներին): Բուհի համար շարունակում է խնդիր մնալ ռիսկերի կառավարման համակարգի ստեղծումը, որը բուհի կողմից անհասկանալի կերպով դիտարկվում է կոռուպցիոն ռիսկերի կառավարման տեսանկյունից (բուհի ներկայացուցիչները նշեցին, որ այս խնդրով զբաղվում է Հակակոռուպցիոն հանձնաժողովը), մինչդեռ կարելի էր դիտարկել ինստիտուտի գործունեության վրա ազդող արտաքին գործոններով, ինչպես նաև ներքին խնդիրներով պայմանավորված ռիսկերը:

Կարելի է փաստել, որ այս չափանիշի շրջանակներում բուհը փոփոխությունների իրականացման փուլում է. փոփոխությունների իրական ազդեցությունը հաստատության գործունեության վրա դեռևս տեսանելի չէ:

Չափանիշ 3. Կրթական ծրագրերի ոլորտում ինստիտուտի կողմից նախաձեռնվել են որոշակի բարեփոխումներ, մասնավորապես՝ վերանայվել և ավելի շոշափելի են դարձել բակալավրի կրթական ծրագրերի վերջանարդյունքներն, առարկայական դասընթացների ծրագրերն, իրականացվել է Կինեզիոլոգիա կրթական ծրագրի բենչմարքինգ և այլն: Կրթական ծրագրերի վերանայման գործընթացներում բուհը համագործակցել է ֆեդերացիաների, գործատուների հետ, ուսանողներն այս

գործընթացներում ակտիվ ընդգրկվածություն չունեն, ուսանողները ներգրավվում են միայն սեփական նախաձեռնությամբ: Դրական է, որ ավելացել է պրակտիկային հատկացվող ժամաքանակը, սակայն պրակտիկան ոչ մի կերպ չի կապվում ուսանողների կողմից իրականացվող հետազոտական աշխատանքների բովանդակության հետ: Ողջունելի է, որ կրթական ծրագրերի մասնագրերը թարգմանվել են օտար լեզուներով (անգլերեն, այժմ նաև՝ ռուսերեն, լավ կլիներ նաև դրանք տեղադրել բուհի պաշտոնական կայքէջում), այնուամենայնիվ օտար լեզվով ծրագրեր ներդնելու համար դեռևս բավականաչափ աշխատանք պետք է արվի, մասնավորապես՝ օտար լեզուների տիրապետումը դասախոսական անձնակազմի շրջանում դեռևս խնդրահարույց է: Այս ոլորտում բուհի համար շարունակում է խնդիր մնալ նաև այն, որ ծրագրերի հիմնական մասը համադրելի չեն այլ հաստատությունների ծրագրերին, մագիստրոսի կրթական ծրագրերի վերջնարդյունքները դեռևս վերանայման կարիք ունեն, ծրագրերի իրականացման համար ռեսուրսներն ունեն թարմացման անհրաժեշտություն, ամբիոնի վարիչներն ու դասախոսական անձնակազմը լուրջ վերապատրաստումների կարիք ունեն՝ դասավանդման և ուսումնառության մեթոդներն ուսումնառության վերջնարդյունքների և գնահատման մեթոդների հետ կապակցելու, դրանք կիրառելու ուղղությամբ: Անհրաժեշտություն կա սահմանել յուրաքանչյուր առարկայի գնահատման չափանիշերը/ռուբրիկները և ուսանողներին գրավոր կերպով հասանելի դարձնել դրանք՝ ապահովելու համար գնահատման թափանցիկությունը: Առկա է նաև ակադեմիական ազնվության խնդիր. թեև բուհի կողմից մշակվել է ակադեմիական ազնվության կարգը, սակայն շահակիցների հետ հանդիպումից պարզ դարձավ, որ կարգի դրույթները չեն կիրառվում ուսումնական հաստատությունում, մասնավորապես՝ գրագողությունը բուհում անպատիժ է մնում, իսկ գրագողության դեմ պայքարի հիմնական գործիքն անհատական հանձնարարություններ տալն է ուսումնառողներին:

Ընդհանուր առմամբ՝ դեռևս վաղ է խոսել բակալավրի կրթական ծրագրերում կատարված փոփոխությունների արդյունավետության մասին, քանի որ ծրագրերը ներ են դրվել այս ուսումնական տարում և մշտադիտարկում չեն անցել: Ինչ վերաբերում է մագիստրատուրային, ապա, ինչպես արդեն նշվել է վերևում, մագիստրոսի կրթական ծրագրերը վերանայման կարիք ունեն: Ուսանողների կողմից բարձրաձայնվեց մագիստրատուրայում մեկամյա ծրագրի նպատակահարմարություն դիտարկման հարցը, վերջիններս նշեցին, որ մեկ տարին բավարար չէ հետազոտություն իրականացնելու համար. այս խնդիրը կարելի է մասամբ լուծել՝ նախադիպլոմային պրակտիկան կապակցելով ուսանողների կողմից արվող հետազոտություններին:

Չափանիշ 4. չափանիշի տիրույթում բուհի կողմից իրականացվել են որոշակի բարելավումներ, մասնավորապես՝ մշակվել է ուսանողի ուղեցույց, որը հասանելի է բուհի պաշտոնական կայքէջում, վերամշակվել է կարիերայի կենտրոնի կանոնակարգը,

ստեղծվել է շրջանավարտների էլեկտրոնային բազա, բաժնի կողմից կազմակերպվել է բուհ-գործատու աշխատաժողովը և այլն: Այդուհանդերձ, կարիերայի կենտրոնն աշխատաշուկայի կարիքների հետազոտում դեռևս չի իրականացնում: Ուսանողներին մատուցվող ծառայությունների գնահատման ուղղությամբ նույնպես առկա են բարելավումներ՝ գնահատման արդյունքների վերլուծության հիման վրա, օրինակ, ավելացել է օտար լեզվին, պրակտիկային հատկացվող ժամաքանակներն, այնուամենայնիվ դեռևս անլուծելի է մնում ուսանողների կողմից բարձրաձայնած այնպիսի խնդիրներ, ինչպիսիք են՝ առկա ռեսուրսների, մասնավորապես՝ մարզադահլիճների թարմացվածությունը, բուհի տեխնիկական հագեցվածությունը և այլն:

Թեև բուհի ներկայացուցիչները նշեցին, որ ՈԻՄ-ն ուսանողների կարիքների բարձրաձայնման հիմնական կառույցն է, այնուամենայնիվ ուսանողների հետ հանդիպումից պարզ դարձավ, որ ՈԻՄ-ն հիմնականում զվաղված է սոցիալական բնույթի միջոցառումներով:

Չափանիշ 5. չափանիշի ուղղությամբ առկա է որոշակի առաջընթաց. մշակվել է դասախոսական, վարչական և ուսումնաօժանդակ անձնակազմերի պաշտոնի հրահանգներ, ինչպես նաև ուսումնաօժանդակ կազմի ատեստավորման համար նախատեսված փաստաթուղթ: Փաստաթղթի համաձայն՝ ուսումնաօժանդակ կազմի կատարողականի գնահատումներ արդեն իսկ իրականացվել են, սակայն՝ որքանով է այս գործընթացը նպաստել անձնակազմի կատարելագործմանը, դեռևս վերլուծված չէ: Դասախոսների կարիքների վերհանման մեխանիզմների մշակման ուղղությամբ իրականացված քայլերը շոշափելի չեն: Բացահայտված կարիքների և դասախոսական կազմի մասնագիտական որակների կատարելագործմանն ուղղված միջոցառումների միջև կապը բացակայում է: Կրթական ծրագրերի պահանջներին համապատասխան դասախոսական կազմին ներկայացվող կոմպետենցիաների սահմանումը նախագծային փուլում է:

Չափանիշ 6. հաշվետու ժամանակահատվածում չափանիշի ուղղությամբ բուհն ունի առաջընթաց, մասնավորապես՝ ձեռքբերում կարելի է համարել միջազգային չափանիշներին համապատասխան սարքավորումներով հագեցած ՄՊՈՐՏ ԿԱԲ գիտահետազոտական կենտրոնի ստեղծումը, սակայն անհրաժեշտություն կա ապրանքայնացնել կենտրոնի արված գիտահետազոտական աշխատանքների արդյունքները՝ ստեղծելով այլընտրանքային ֆինանսական աղբյուրների հնարավորություն բուհի համար (այս ուղղությամբ բուհն արդեն տանում է աշխատանքներ): Հաշվետու ժամանակահատվածում բուհը պատվեր է ստացել Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի

նախարարությունից՝ մանկապատանեկան մարզադպրոցների ծրագրեր մշակելու համար, այժմ ամբիոններում հանձնարարված է կազմել այդ ծրագրերը, սակայն վերոնշյալ պատվերի դիմաց որևէ ֆինանսական մուտք չի նախատեսվել բուհի համար:

Ռազմավարական ծրագրում վերանայվել են հետազոտության ոլորտին առնչվող առաջընթացի ցուցիչները, **որոնցից ոչ բոլորը, սակայն, կարելի է համարել չափելի:** Այս ուղղությամբ իրականացված քայլերի մասին խոսելիս անհրաժեշտ է նաև նշել միջազգային և գիտատեղեկատվական կենտրոնի ստեղծման, ԱՊՀ և եվրոպական երկրների հետ համագործակցության ակտիվացման, ուսանողների կողմից համաժողովներին մասնակցության մակարդակն ավելացման մասին:

Միջառարկայական մոտեցումների հետ կապված կարելի է փաստել, որ յուրաքանչյուր ամբիոնի աշխատանքային պլաններում առկա են միջառարկայական մոտեցումներով հետազոտական ուղղություններ, **սակայն այս ուղղությամբ համակարգային մոտեցում բուհում առկա չէ:** Բուհը թեև խրախուսում և աջակցում է դասախոսական անձնակազմի կողմից գիտահետազոտական աշխատանքների իրականացմանն, **այնուամենայնիվ միջազգային գիտական գրախոսվող ամսագրերում հրապարակումների քանակը շարունակում է մնալ համեստ:** Գիտահետազոտական աշխատանքների սոցիալական ազդեցության գնահատման գործիքներ դեռևս մշակված չեն:

Անհրաժեշտ է նաև նշել, որ ֆիզիկական պատրաստության հիմնախնդիրների վերաբերյալ ամենամյա համաժողովից բացի բուհն իրականացրել է հոգեբանության խնդիրների վերաբերյալ միջազգային գիտաժողով, ինստիտուտն այս տարի առաջին անգամ նաև ասպիրանտ է ընդունել:

Ցանկալի կլիներ, որ դասախոսական կազմն իրականացներ հետազոտություններ նաև իրենց կողմից դասավանդվող առարկաների դասավանդման, ուսումնառության և գնահատման մեթոդների արդյունավետության վերաբերյալ:

Չափանիշ 7. այս չափանիշի շրջանակներում հաշվետու ժամանակահատվածում բուհի կողմից իրականացվել են հետևյալ գործընթացները՝ որոշ ամբիոններում, մարզադահլիճներում և լաբորատորիաներում իրականացվել է նյութատեխնիկական բազայի թարմացման աշխատանքներ, ստեղծվել է ֆիզիոլոգիայի կաբինետ, որը թույլ է տալիս ուսանողներին տեղում իրականացնել գործնական աշխատանքներ, ինչն իր հերթին հանգեցնում է գնահատման գործընթացի բարելավմանը: Բուհում իրականացվել է ֆինանսատնտեսական աուդիտ, կատարվել են լսարանների տարեկան զբաղվածության ուսումնասիրություններ և ֆինանսական նպատակահարմարությունից ելնելով՝ համապատասխան օպտիմալացման աշխատանքներ, լրամշակվել է ռեսուրսների վերաբերյալ հարցումների կարգը և հարցաթերթիկները, **որոնց արդյունքների հիման վրա վերլուծություն դեռևս չի իրականացվել:** Այս ոլորտում բուհի համար շարունակում է խնդիր մնալ առկա ռեսուրսների թարմացումը, բուհի տեխնիկական հագեցվածությունը: Թեև հաշվետու ժամանակահատվածում վերանայվել է բուհի բյուջեում

նյութատեխնիկական թարմացմանը և նորագույն սարքավորումներով հագեցմանը հատկացվող ֆինանսական միջոցները, այնուամենայնիվ, ինչպես փաստեցին բուհի ներկայացուցիչները, այդ նպատակով նախատեսված ֆինանսական միջոցները հատկացվել է այլ խնդիրների լուծմանը: Ծրագրով նախատեսված է եղել նաև ԿԱՊԿՈՒ ուսանողների համար համապատասխան միջավայրի ստեղծումը, որը չի իրականացվել: Այս խնդիրը բուհի կողմից չի դիտարկվում որպես դիմորդների հոսքի մեծացման գործոն, ավելին, հաշվի առնելով վնասվածքներ ստանալու տեսանկյունից սպորտի բնագավառի ռիսկայնությունը, նմանօրինակ ենթակառուցվածքների ստեղծումը նաև հնարավորություն կտար այդօրինակ խնդիրների ունեցող մասնագետներին դասավանդել ուսումնական հաստատությունում:

Զափանիշ 8. այս ոլորտում բուհը գրեթե առաջընթաց չունի՝ չի գնահատվել հաշվետվողականության համակարգի արդյունավետությունն, արտաքին շահակիցների հետ հետադարձ կապի ֆորմալ մեխանիզմները դեռ ուսումնասիրության փուլում են, հասարակության հետ հետադարձ կապի գործող մեխանիզմների արդյունավետությունը դեռ չի վերլուծվել: Որպես ցկյանս ուսումնառության ծրագրեր կազմակերպվում են միայն Սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության կողմից ֆինանսավորվող մարզիչների վերապատրաստումներ և որակավորման բարձրացման դասընթացներ: Դրական է, որ տեղեկատվությամբ համալրվել է բուհի պաշտոնական կայքէջը:

Զափանիշ 9. չափանիշը փորձագիտական խմբի կողմից գնահատվել է «անբավարար»: Հավետու ժամանակահատվածում վերանայվել է բուհի ՌԾ-ի արտաքին կապերին և միջազգայնացմանը վերաբերող նպատակները և դրանց գնահատման ցուցիչները, **թեև դրանք դեռևս այնքան էլ հստակ չափելի չեն և այս առումով ունեն վերանայման կարիք:** Համագործակցություն է ձեռք բերվել Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի ինստիտուտների եվրոպական ասոցիացիայի, Եվրասիական երկրների մանկավարժական համալսարանների ասոցիացիայի, միջազգային օլիմպիական ակադեմիայի հետ, որոշակիորեն ընդլայնվել է գործատուների հետ համագործակցության շրջանակը: Թեև ուսումնական պլաններում և դասախոսական կազմի վերապատրաստման դասընթացներում ավելացել են օտար լեզվին հատկացվող ժամաքանակները, դասախոսներ ընտրելիս հաշվի են առնվում օտար լեզվի իմացությունն, այնուամենայնիվ օտար լեզուների իմացությունը բուհում դեռևս ցածր մակարդակի վրա է, ինչը խոչընդոտում է շարժունության ծրագրերի իրականացմանը: Շահակիցների կողմից բարձրաձայնվեց այն խնդիրը, որ

լեզուների ուսուցման համար նախատեսված խմբերը բաժանված չեն ըստ լեզուների իմացության մակարդակի, ինչը չի բերում լեզվի յուրացման արդյունավետության: Դեռևս մշակված չէ բուհի միջազգայնացմանը միտված քաղաքականությունը:

Չափանիշ 10. Չափանիշը փորձագիտական խմբի կողմից գնահատվել է «անբավարար»: Որակի ապահովման ոլորտում վերանայվել է որակի ներքին ապահովման քաղաքականությունը: ՈԱ ընթացակարգերի վերանայումը նախապատրաստական փուլում է, բացակայում է դրանց արդյունավետության գնահատման գործիքները, հետևապես նաև արդյունավետության վերլուծությունները: ՀՖԿՍՊԻ-ի որակի ապահովման գործընթացների կառավարման համար տրամադրած մարդկային, նյութական և ֆինանսական ռեսուրսների գնահատման ուղղությամբ նախատեսվել և իրականացվել են որոշակի գործընթացներ, սակայն հստակ մեխանիզմներ դեռևս առկա չեն: Վերանայվել է ՈԱ բաժնի կանոնադրությունը, որը հասանելի է բուհի պաշտոնական կայքէջում: ՈԱ բաժնի աշխատակիցների համար մշակվել են պաշտոնի հրահանգներ: Կրթության որակի ապահովմանն ուղղված կառուցվածքային և բովանդակային փոփոխությունների արդյունավետությունը գնահատող մեխանիզմներ դեռևս չեն մշակվել, գործընթացների որակի վերաբերյալ տեղեկատվության տարածման համար կիրառվող մեխանիզմների արդյունավետության վերլուծություններ նույնպես առկա չեն:

Ընդհանուր առմամբ այնպիսի տպավորություն է ստեղծվում, որ որակի ապահովման բաժնի աշխատակիցները, ստիպված զբաղված լինելով այլ տիրույթների խնդիրների լուծմամբ, չեն հասցնում վերլուծել սեփական աշխատանքը և զբաղվել ՈԱ տիրույթի բարելավման խնդիրներով, ինչը նշանակում է, որ որակի մշակույթի կայացումը բուհում դեռևս ցածր մակարդակի վրա է:

Եզրակացություն խնդիրների լուծման ռիսկայնության վերաբերյալ

Վերլուծելով փորձագիտական զեկույցում վեր հանված խնդիրների լուծման ուղղությամբ բուհի առաջընթացը, հետաձգված կամ չիրականացված քայլերը՝ Ծրագրի իրագործումը կարելի է գնահատել **ռիսկային**: Անհրաժեշտ է վերլուծել իրականացված բարելավումների արդյունավետությունն ուսանողների՝ կրթական ծրագրերում նշված վերջնարդյունքների ձեռքբերման տեսակետից:

Հավելվածներ

Հավելված 1. Մշտադիտարկման ժամանակացույց

Ժ Ա Մ Ա Ն Ա Կ Ա Ց ՈՒ Ց Ց

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿՈՒԼՏՈՒՐԱՅԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՊԵՏԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՈՐԱԿԻ ՆԵՐՔԻՆ
ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ
ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ

23.11.2018թ.

23.11.2018 թ.	Մկիզբ	Ավարտ	Տևողություն
1 Հանդիպում ռեկտորի հետ	09:15	09:30	15 րոպե
2 Հանդիպում պրոռեկտորների հետ	09:30	10:10	40 րոպե
3 Հանդիպում որակի ապահովման կենտրոնի աշխատակիցների հետ	10:15	11:15	60 րոպե
4 Հանդիպում ամբիոնների վարիչների հետ /6-8 մասնակից/	11:20	12:20	60 րոպե
5 Ընդմիջում	12:30	13:10	40 րոպե
6 Հանդիպում պրոֆեսորադասախոսական կազմի ներկայացուցիչների հետ / 8-10 դասախոս/	13:15	14:15	60 րոպե
7 Հանդիպում ուսանողության ներկայացուցիչների հետ /8-10 ուսանող, ՈԻԳԸ, ՈԻԽ, Բակլավարատ, մագիստրատուրա/	14:20	15:20	60 րոպե
8 Փաստաթղթերի ուսումնասիրություն, ներքին քննարկում	15:20	16:00	40 րոպե
9 Ամփոփում և արդյունքների քննարկում բուհի հետ	16:05	16:35	30 րոպե

«Մասնագիտական կրթության որակի ապահովման
ազգային կենտրոն» հիմնադրամի
տնօրեն Ռ. Թովչյան

23.11.2018թ.

Հավելված 2. Մշտադիտարկման տրամաբանական մատրիցայի գնահատում

	ՀՖԿՄՊԻ-ի Ծրագրում նշված խնդիրները 2 տարվա համար	Վերջնարդյունք	Ստուգման միջոցներ	Տեղեկատվություն կատարման վերաբերյալ
1.	Վերաձևակերպել բուհի առաքելությունը՝ դարձնելով այն առավել մատչելի շահակիցների ընկալման համար: /չափանիշ 1/	ՀՖԿՄՊԻ առաքելության նոր տեքստը	Վերանայված առաքելության վերաբերյալ հարցումների արդյունքներ	Բուհի առաքելությունը վերամշակվել է:
2.	Ընդլայնել արտաքին շահակիցների ընդգրկվածությունը ՌԾ լրամշակման, իրականացման գործընթացում: /չափանիշ 1/	Հաստատված նոր հանձնախումբ՝ համալրված արտաքին շահակիցներով	Հանձնախմբի կազմի 30 տոկոսը արտաքին շահակիցներ են	Վերանայվել է ՌԾ լրամշակման հանձնախմբի կազմը՝ ներգրավվելով արտաքին շահակիցներ:
3.	Պարբերաբար գնահատել շահակիցների ներգրավման մեխանիզմների արդյունավետությունը՝ կատարելագործելով արտաքին և ներքին շահակիցների կարիքների վերհանման մեխանիզմները /չափանիշ 1/	Շահակիցների ներգրավման մեխանիզմների պարբերաբար իրականացվող գնահատումներ Շահակիցների ներգրավման արդյունավետ գործող մեխանիզմներ	Շահակիցների ներգրավման մեխանիզմների արդյունավետության վերլուծություններ Շահակիցների բավարարվածությունը կարիքների բավարարման մակարդակից	Նախագծային փուլում է շահակիցների ներգրավվածության քաղաքականությունը: Ներքին և արտաքին շահակիցների կարիքների վերհանման արդյունավետության գնահատման մեխանիզմների վերաբերյալ հարցումներ, հետևապես նաև վերլուծություններ բացակայում են:

4.	ՌԾ նպատակների և խնդիրների իրականացման արդյունքների արդյունավետության գնահատման ցուցիչները դարձնել չափելի /չափանիշ 1/	Մշակված և հաստատված ՌԾ նպատակների և խնդիրների իրականացման արդյունքների արդյունավետության գնահատման չափելի ցուցիչներ	ՌԾ նպատակների և խնդիրների գնահատման նոր ցուցիչներ Ըստ ցուցիչների հավաքագրված տեղեկատվությունն Հաշվետվություններ	Ռեկտորի հրամանով ստեղծված ՀՖԿՄՊԻ զարգացման ռազմավարական պլանավորման հանձնախումբը վերանայել է ՌԾ նպատակների գնահատման ցուցիչներն, այնուամենայնիվ մշակված ցուցիչներից ոչ բոլորը կարելի է համարել իրապես չափելի:
5.	Վերանայել ՄՈւՀ-ի կազմակերպական կառուցվածքը՝ հստակեցնելով բոլոր ստորաբաժանումների փոխկապակցվածությունը և գործառնական փոխհարաբերությունները, ամրագրել ինստիտուտի բոլոր աշխատակիցների գործառույթները /չափանիշ 2/	ՄՈւՀ-ի վերանայված կազմակերպական կառուցվածք՝ ստորաբաժանումների և աշխատակիցների հստակ սահմանված գործառույթներով	Բուհի կառավարման կառուցվածքի արդյունավետության գնահատականի աճ	Վերամշակվել է ինստիտուտի կանոնադրությունը՝ կապված ՊՈԱԿ-ից Հիմնադրամի անցման հետ: Վերանայվել է բուհի կազմակերպական կառուցվածքը:
6.	Մշակել մարդկային ռեսուրսների կառավարման քաղաքականություն՝ ուղղված համապատասխան կադրային ռեսուրսներով ապահովվածությանը /չափանիշ 2/	Շահակիցներին բավարարող ՀՖԿՄՊԻ հաստատված մարդկային ռեսուրսների կառավարման քաղաքականություն	ՀՖԿՄՊԻ մարդկային ռեսուրսների կառավարման քաղաքականություն Շահակիցների բավարարվածությունը մարդկային ռեսուրսների կառավարման քաղաքականությունից	Քաղաքականությունը նախագծային փուլում է: Մարդկային ռեսուրսների բաժնի կողմից մշակվել են դասախոսական, վարչական և ուսումնաօժանդակ կազմի պաշտոնի հրահանգներ:
7.	Ուսումնասիրել և վերլուծել ՄՈւՀ-ի գործունեության վրա ազդող արտաքին գործոնները /չափանիշ 2/	ՄՈւՀ-ի գործունեության վրա ազդող արտաքին գործոնների ուսումնասիրության արդյունքների վրա հիմնված պլաններ	ՄՈւՀ-ի գործունեության SWOT վերլուծության զեկույց	Ռեկտորի հրամանով ձևավորվել է աշխատանքային խումբ: ՄՈւՀ-ի գործունեության վրա ազդող արտաքին գործոնների ուսումնասիրությունն նախատեսվում է իրականացնել 2019-2020 ուստարվա ընթացքում:

8.	Մշակել կարճաժամկետ և միջնաժամկետ գործողությունների իրականացման ծրագրեր՝ նպատակա-ուղղված ՌԾ-ի ժամանակացույցի կա-տարմանն, ինչպես նաև մշակել կարճաժամկետ, միջնաժամկետ և երկարաժամկետ պլանների իրա-կանացման, մշտադիտարկման և գնահատման հստակ մեխանիզմներ և գործիքակազմ	Ռազմավարական խնդիրների լուծման հստակ պլանավորում	Բուհի պլանների իրականացման, մշտադիտարկման և գնահա-տրման գործող հստակ մեխանիզմներ և գործիքակազմ	Մշակվել է կարճաժամկետ և միջնաժամկետ պլանավորման ձևաթուղթ, առկա են պլանների գնահատման մեխանիզմներ:
	/չափանիշ 2/	Վստահելի տեղեկատվություն պլանավորված վերջնարդյունքների ձեռքբերման աստիճանի վերաբերյալ	Մշտադիտարկման և տարեկան գնահատման հրապարակված հաշվետվություններ	
9.	Բարելավել որոշումների կայացման գործընթացում արտաքին և ներքին շահակիցների ներգրավման մեխանիզ-մները	Կառավարման բոլոր մակարդակներում որոշումների կայացման գործընթացներում ներքին և հնարավորության սահ-մաններում արտաքին շահակցների ներգրավվածության մեծացում	Հրատարակված համապատասխան իրավանորմատիվային փաստաթղթեր Կառավարման մարմիններում ընդգրկված շահակիցների թիվը	Ինստիտուտի ռեկտորի հրամանով աշխատանքային խմբերում ընդգրկել են արտաքին շահակիցներ, պլանավորվում է գիտական խորհրդի կազմում նույնպես ընդգրկել առնվազն 1 արտաքին շահակցի՝ որպես դիտորդ: Այնուամենայնիվ, արտաքին շահակիցների մասնակցության արդյունավետության գնահատում և վերլուծություններ բուհում դեռևս չեն իրականացվել:
	/չափանիշ 2/			
10.	Կատարելագործել գործող ՄԿԾ-երի և իրականացվող գործընթացների արդյունավետության վերաբերյալ տե-ղեկատվության հավաքագրման, վերլուծության և կիրառումը գնահատող մեխանիզմների համակարգը	ՄԿԾ-ի և իրականացվող գործընթացների արդյունավետու-թյան վերաբերյալ տեղեկատվությունը գնահատվում է կատարողական ակտերով և հաշվետվություններով	Վերանայված գնահատման մեխանիզմներ	Պլանավորման փուլում է:
	/չափանիշ 2/			
11.	Հստակեցնել ֆինանսական ռեսուրսների բաշխման քաղաքականու-թյունն ըստ ռազմավարական գերակայությունների	Ֆինանսական ռեսուրսների բաշ-խում ըստ ռազմավարական գերակայությունների	Ֆինանսների բաշխման հաստատված նոր քաղաքականություն	Մշակվել է ֆինանսների բաշխման և տնօրինման նոր քաղաքականություն:

	/չափանիշ 2/		Ըստ ռազմավարական գերակայությունների բյուջեի հաստատված նախահաշիվ	
12.	Մտեղծել ռիսկերի կառավարման համակարգ /չափանիշ 2/	Գործող ռիսկերի կառավարման համակարգ	Ռիսկերի գնահատման հաշվետվություններ	Պլանավորման փուլում է:
13.	Տարանջատել բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերի վերջնարդյունքները բոլոր ՄԿԾ-ներում /չափանիշ 3/	Հստակ տարանջատված վերջնարդյունքներ բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերում	Կրթական վերջնարդյունքների հաստատված ցանկեր բոլոր ՄԿԾ-ների համար	Վերանայվել են միայն բակալավրի կրթական ծրագրի ՄԿԾ-ների վերջնարդյունքները, իսկ մագիստրոսի կրթական ծրագրերինը՝ դեռևս չի վերանայվել:
14.	Ապահովել դասավանդման և ուսումնառության մեթոդների կապն ուսումնառության վերջնարդյունքների և գնահատման մեթոդների հետ՝ ներդնելով ուսանողակներին մոտեցումներ /չափանիշ 3/	Մշակված և ներդրված ուսանողակներին մոտեցումներով դասուցման և ուսումնառության վերջնարդյունքների գնահատման համակարգ	Հաստատված քաղաքականություններ և ընթացակարգեր Վերապատրաստված դասախոսական կազմ	Դասավանդման և ուսումնառության, ինչպես նաև ուսանողների գնահատման մեթոդների ընտրության քաղաքականություն բուհում, որպես այդպիսին, առկա չէ: Այնուամենայնիվ, վերանայվել են առարկայական դասընթացների ծրագրերը՝ հաշվի առնելով դասավանդման և ուսումնառության մեթոդների կապն ուսումնառության վերջնարդյունքների և գնահատման մեթոդների հետ: Առարկայական դասընթացների նոր ծրագրերում առկա են համապատասխան քարտեզագրումներ: Դասախոսական կազմի համար այս ուղղությամբ իրականացվել են որոշակի վերապատրաստումներ, որոնց արդյունավետությունը, սակայն, դեռևս վերլուծված չէ:
15.	Մշակել գիտելիքների գնահատման չափանիշներ՝ ելնելով յուրաքանչյուր առարկայի առանձնահատկությունից /չափանիշ 3/	Գնահատման չափանիշներ դասընթացների ծրագրերում	Լրամշակված և հաստատված գիտելիքների գնահատման կարգ	Վերանայված առարկայական դասընթացների ծրագրերում ամրագրված են որոշակի մոտեցումներ:

16.	Մշակել ակադեմիական ազնվությունն ապահովող գործիքներ /չափանիշ 3/	Հաստատված ակադեմիական ազնվության կարգ և ներդրված գործիքներ	Հաստատված կարգեր, ընթացակարգեր և գործիքներ Նիստերի արձանագրություններ	Փաստաթուղթը մշակվել է:
17.	Արմատավորել ՄԿԾ-ների մշակման, պարբերաբար մշտադիտարկման, դրանց իրականացման արդյունավետության գնահատման և բարելավման գործընթացներն ինստիտուտում՝ ներառելով շահակիցներին և վերհանելով աշխատաշուկայի պահանջները /չափանիշ 3/	Կրթական ծրագրերի մշակման, մշտադիտարկման, գնահատման և վերանայման կանոնակարգված գործընթաց	Գործող կարգեր Մշակման կարգին համապատասխան կրթական ծրագրեր Մշտադիտարկման հաշվետվություններ	Մշակվել է ՄԿԾ-ների մշակման և հաստատման կարգը, լրամշակվել է ՄԿԾ-ների մշտադիտարկման և վերանայման ընթացակարգը, որը դեռևս չի փորձարկվել:
18.	Ներդնել կրթական ծրագրերի միջազգային բենչմարքինգի լավագույն փորձը /չափանիշ 3/	Տեղայնացված և ներդրված կրթական ծրագրերի միջազգային լավագույն փորձ	Բուհերի ցանկ, բենչմարքինգի տվյալներ	Իրականացվել է Կինեզիոլոգիա կրթական ծրագրի բենչմարքինգ Բելգիայի Լյովենի համալսարանի հետ: Արդյունքում վերանայվել են ծրագրի ուսումնական պլանը և վերջնարդյունքները:
19.	Տարածել բուհի ներսում առկա ՄԿԾ-ի մշակման և վերանայման, արդիականացման ու բարելավման լավագույն փորձը /չափանիշ 3/	ՄԿԾ-ի մշակման և վերանայման, արդիականացման ու բարելավման լավագույն փորձի տարածումը ինստիտուտում	ՄԿԾ-ի մշակման և վերանայման, արդիականացման ու բարելավման գործընթացների մշտադիտարկման հաշվետվություններ	Որոշ գործընթացներ իրականացվում են Կինեզիոլոգիա կրթական ծրագրի օրինակով, որոնք, սակայն, դեռևս կանոնակարգված չեն:
20.	Ներդնել ՄԿԾ-ների մշակման միջառարկայական մոտեցումներ /չափանիշ 3/	Միջառարկայական ՄԿԾ և միջառարկայական դասընթացների մշակման պրակտիկա	Մշակված մեկ միջառարկայական ՄԿԾ և միջառարկայական դասընթացներ	Նման մոտեցում որդեգրվել է՝ պայմանավորված մասնագիտությունների ցանկի վերանայմամբ, սակայն բուհն ինքնին այս ուղղությամբ նշանակալի քայլեր չի ձեռնարկել:

21.	Մշակել ՀՖԿՄՊԻ -ի ուսանողի ուղեցույց /չափանիշ 4/	Հրապարակված ուսանողի ուղեցույց	Ուղեցույցի առկայությունը կայքում Ուսանողների տեղեկացվածությունը ուղեցույցի մասին	Մշակվել է ուսանողի ուղեցույց, որը հասանելի է կայքում. ուսանողները տեղյակ են ուղեցույցի մասին:
22.	Վերափոխել կարիերայի կենտրոնի աշխատանքն՝ այն նպատակառոտ դելով աշխատաշուկայի կարիքների հետազոտմանը, շրջանավարտների զբաղվածության ուսումնասիրությանը և նրանց հետ կայուն հետադարձ կապի ապահովմանը /չափանիշ 4/	Վերանայված գործառույթներով շրջանավարտների և կարիերայի կենտրոն	Կենտրոնի նոր կանոնակարգ Շրջանավարտների էլեկտրոնային բազա Գրանցված շրջանավարտների միություն	Վերամշակվել է կարիերայի կենտրոնի կանոնակարգը: Ստեղծվել է շրջանավարտների էլեկտրոնային բազա, բաժնի գործառույթների մեջ ավելացել են պրակտիկաների կազմակերպումն ու անցկացումը, բաժնի կողմից կազմակերպվել է բուհ-գործատու աշխատաժողովը: Այդուհանդերձ, կարիերայի կենտրոնն աշխատաշուկայի կարիքների հետազոտում դեռևս չի իրականացնում:
23.	Կատարելագործել ուսանողների կրթական կարիքների վերհանման և գնահատման ընթացակարգերն ու մեխանիզմները՝ մասնակից դարձնելով ուսանողին /չափանիշ 4/	Վերանայված և հաստատված ուսանողների կրթական կարիքների վերհանման և գնահատման մեխանիզմներ և ընթացակարգեր	Վերանայված ուսանողների կրթական կարիքների վերհանման և գնահատման կարգի առկայություն ինստիտուտի կայքէջում	Որոշ մեխանիզմներ և ընթացակարգեր փոփոխվել են, սակայն դրանց արդյունավետությունը վերլուծված չէ:
24.	Մահմանել և փաստաթղթավորել կրթական ծրագրերի պահանջներին համապատասխան դասախոսական կազմին ներկայացվող կոմպետենցիաները /չափանիշ 5/	Կրթական ծրագրերի պահանջներին համապատասխան դասախոսական կազմին ներկայացվող փաստաթղթավորված կոմպետենցիաներ	Դասախոսական կազմին ներկայացվող կոմպետենցիաների պահանջների ցանկի առկայություն կրթական ծրագրերում	Նախագծային փուլում է:
25.	Մշակել դասախոսների կարիքների վերհանման մեխանիզմներ, աջակցել դասախոսական կազմի մասնագիտական որակների կատարելագործմանը, նպաստել ոլորտում գիտական	Լրամշակված և հաստատված դասախոսների կարիքների վերհանման արդյունավետ մեխանիզմներ	Հրապարակված դասախոսների կարիքների վերհանման գործիքներ և ընթացակարգեր	Մշակվել են կարիքների վերհանման մեխանիզմներ: Դասախոսների վերհանված կարիքների գնահատման հաշվետվությունները պլանավորվում է ներկայացնել հաջորդ տարում:

	աստիճան ունեցող դասախոսների աճին /չափանիշ 5/	Վերապատրաստումների իրականացում ըստ կարիքների	Կարքիների գնահատման վերլուծություններ Դասախոսների բավարարվածությունը վերապատրաստումներից	Վերանայվել է դասախոսական և ուսումնառական կազմի վերապատրաստումների կազմակերպման կարգը:
26.	Մշակել դասախոսական և ուսումնառական անձնակազմի պաշտոնի անձնագրեր /չափանիշ 5/	Հաստատված դասախոսական և ուսումնառական անձնակազմի պաշտոնի անձնագրեր	Պաշտոնի անձնագրերի ձևաչափեր Հաստատված պաշտոնի անձնագրերի առկայություն ամբիոններում	Մշակվել է դասախոսական կազմի և ուսումնառական անձնակազմի պաշտոնի հրահանգներ:
27.	Սահմանել վարչական աշխատակազմի ձևավորման նորմատիվներ /չափանիշ 5/	Լրամշակված և հաստատված վարչական աշխատակազմի ձևավորման նորմատիվներ և դրանց համապատասխան վար- չակազմ	Հրապարակված և հասանելի նորմեր Վարչակազմի փոփոխության հրամաններ	Մշակվել է վարչական կազմի պաշտոնի հրահանգ:
28.	Իրականացնել ուսումնառական կազմի կատարողականի գնահատում /չափանիշ 5/	Ուսումնառական կազմի կատարողականի օբյեկտիվ գնահատում հստակ ընթացակարգերով	Հաստատված գնահատման չափանիշներ, գործիքներ և ընթացակարգեր	Մշակվել է ուսումնառական կազմի ատոստավորման համար նախատեսված փաստաթուղթ: Ուսումնառական կազմի կատարողականի գնահատումներ արդեն իսկ իրականացվել են:
29.	Հստակեցնել ռազմավարական ծրագ- րում հետազոտական ոլորտի առաջ- ընթացի ցուցիչները /չափանիշ 6/	Լրամշակված և հաստատված հետազոտական ոլորտի առաջընթացի ցուցիչներ	Հետազոտական ոլորտի առաջընթացի հրապարակված նոր ցուցիչներ	Վերանայվել են առաջընթացի ցուցիչները, որոնցից ոչ բոլորն է կարելի համարել հստակ:
30.	Խթանել հետազոտությունների միջառարկայական մոտեցումը և դրան համապատասխան սահմանել ներբու- հական հետազոտության նոր առաջ- նահերթություններ /չափանիշ 6/	Միջառարկայական գիտահետազոտական աշխատանքների թեմաների առկայություն	Բուհի հաստատված ռազ- մավարությունը ոլորտի համար Հաստատված հետազոտության թեմաներ և գործող գիտական խմբեր	Փաստացի յուրաքանչյուր ամբիոնի աշխատանքային պլաններում առկա են միջառարկայական մոտեցումներով հետազոտական ուղղություններ:

31.	Դիտարկել գիտահետազոտական և գիտատեղեկատվական գործունեությամբ զբաղվող ստորաբաժանումների միավորման նպատակահարմարությունը /չափանիշ 6/	Ինստիտուտի գիտատեղեկատվական կենտրոնի գործառնությունների միավորում գիտահետազոտական բաժնի գործունեության հետ	Նիստերի արձանագրություններ, Ինստիտուտի նոր ստորաբաժանման կանոնադրություն	Լուծարվել է գիտատեղեկատվական կենտրոնը:
32.	Աշխատանքներ տանել միջազգային հետազոտական համագործակցության և հետազոտական ցանցի ստեղծման ուղղությամբ /չափանիշ 6/	Մշակված և հաստատված ինստիտուտի գիտ. գործունեության վերաբերյալ մեթոդական ցուցումներ, ուր ներառված են միջազգային համագործակցության և հետազոտական ցանցի ընդլայնման խնդիրները	Հանդիպումների արձանագրություններ Կայքում տեղադրված ինստիտուտի գիտահետազոտական գործունեության կատարման մեթոդական ցուցումներ	Ինստիտուտի գիտ. գործունեության վերաբերյալ մեթոդական ցուցումներ մշակված չեն: Ստեղծվել է միջազգային չափանիշներին համապատասխան սարքավորումներով հագեցած ՄՊՈՐՏ ԿԱԲ գիտահետազոտական կենտրոնը:
33.	Ավելացնել միջազգային գրախոսվող և բարձր վարկանիշ ունեցող ամսագրերում հրատարակումների քանակը /չափանիշ 6/	Միջազգային գրախոսվող և բարձր վարկանիշ ունեցող ամսագրերում հրատարակումների կարևորումը ինստիտուցիոնալ մակարդակով և դասախոսական կազմի խրախուսման մեխանիզմների ներդրում	Խրախուսման հրապարակված քաղաքականություն Հոդվածների և կոնֆերանսների մասնակիցների թիվը	Առկա են որոշ հրապարակումներ:
34.	Մշակել գիտահետազոտական աշխատանքների սոցիալական ազդեցության գնահատման գործիքներ /չափանիշ 6/	Գիտահետազոտական աշխատանքների սոցիալական ազդեցության գնահատական	Հաստատված գնահատման գործիքներ և ընթացակարգ Գնահատման հաշվետվություններ	Դեռևս չի իրականացվել:
35.	Ընդլայնել ֆինանսական հատկացումներն՝ ուղղված նյութատեխնիկական բազայի թարմացմանը և նորագույն սարքավորումներով հագեցմանը /չափանիշ 7/	Վերանայված բյուջե՝ ըստ բուհի կողմից սահմանված առաջնահերթությունների	Բազայի թարմացման առաջնահերթությունների ցանկը Տարեկան գնումների պլան	Որոշ ամբիոններում, մարզադահլիճներում և լաբորատորիաներում իրականացվել է նյութատեխնիկական բազայի թարմացման աշխատանքներ:

36.	Իրականացնել ֆինանսատնտեսական առուղիտ /չափանիշ 7/	Ֆինանսական գործունեության համապատասխանության գնահատում	Առուղիտի հաշվետվություն Բարելավումների պլանի Իրականացման հաշվետվություններ	Իրականացվել է ֆինանսատնտեսական առուղիտ:
37.	Գնահատել կրթական ռեսուրսների արդյունավետությունը, կիրառելիությունը և հասանելիությունը գնահատող գործիքների արդյունավետությունը /չափանիշ 7/	Լրամշակված և հաստատված կրթական ռեսուրսների արդյունավետությունը, կիրառելիությունը և հասանելիությունը գնահատող գործիքներ	Լրամշակված հարցաթերթիկներ Հարցումների արդյունքների տվյալների վերլուծություն	Լրամշակվել է հարցումների կարգը և հարցաթերթիկները, որոնց արդյունքների հիման վրա վերլուծություն նախատեսվում է իրականացնել հաջորդ տարում:
38.	Գնահատել լսարանների տարեկան զբաղվածությունը և օպտիմալացնել ռեսուրսների բաշխումը (խնայելով ջեռուցման և այլ ծախսերը): /չափանիշ 7/	Օպտիմալ լսարանների տարեկան ծանրաբեռնավածություն	Լսարանների տարեկան զբաղվածության վերլուծություններ	Բուհի կողմից կատարվել են լսարանների տարեկան զբաղվածության ուսումնասիրություններ և համապատասխան օպտիմալացման աշխատանքներ:
39.	Մտեղծել համապատասխան միջավայր հատուկ կարիքներ ունեցող ուսանողների կրթության կազմակերպման համար /չափանիշ 7/	Համապատասխան միջավայր հատուկ կարիքներ ունեցող ուսանողների կրթության կազմակերպման համար	Շենքում տեղաշարժի գծային կառուցվածք հատուկ կարիք ունեցող անձանց համար	Բացակայում է:
40.	Գնահատել հաշվետվողականության համակարգի արդյունավետությունը /չափանիշ 8/	Տեղեկատվություն հաշվետվողականության համակարգի արդյունավետության վերաբերյալ	Վերլուծական զեկույց, Հաշվետվողականության կարգ	Չի իրականացվել:
41.	Վերլուծել հասարակության հետ հետադարձ կապի գործող մեխանիզմների արդյունավետությունը /չափանիշ 8/	Հասարակության հետ հետադարձ կապի գործող մեխանիզմների արդյունավետության վերլուծություններ	Հասարակության հետ կապի մեխանիզմների արդյունավետության գնահատման զեկույց	Չի իրականացվել:

42.	Մշակել հասարակության համար ցկյանս ուսումնառության ծրագրեր սպորտի և ֆիզիկական կուլտուրայի ոլորտում, որոնք կարող են ընդլայնել ՄՈՒՀ-ի ֆինանսական մուտքերը /չափանիշ 8/	Ցկյանս ուսումնառության կազմակերպման լավագույն փորձի օրինակներ	Ցկյանս ուսումնառության ներդրված ծրագրեր	Իրականացվում են մարզիչների վերապատրաստումներ և որակավորման բարձրացման դասընթացներ, որոնք ֆինանսավորվում են Սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության կողմից:
43.	Մշակել փորձի փոխանակմանը, զարգացմանը և միջազգայնացմանը միտված համակարգված և ամբողջական քաղաքականություն և ռազմավարություն /չափանիշ 9/	Մշակված միջազգայնացմանը միտված քաղաքականություն	Միջազգայնացման հաստատված քաղաքականություն	Վերանայվել է բուհի ՌԾ-ի արտաքին կապերին և միջազգայնացմանը վերաբերող նպատակը: Միջազգայնացմանը միտված քաղաքականությունը բացակայում է:
44.	Մշակել միջազգային գործունեության արդյունավետությունը գնահատող չափելի ցուցիչներ /չափանիշ 9/	Միջազգայնացման արդյունավետությունը գնահատող չափելի ցուցիչներ	Վերանայված ցուցիչներ միջազգայնացման գործողությունների ծրագրում	Վերանայվել է բուհի ՌԾ-ի արտաքին կապերին և միջազգայնացմանը վերաբերող նպատակի ձեռքբերման գնահատման ցուցիչները:
45.	Ընդլայնել գործատուների հետ համագործակցության շրջանակը /չափանիշ 9/	Համագործակցությանը խոչընդոտող վեր հանված պատճառներ	Ուսումնասիրության հաշվետվություններ Կնքված նոր պայմանագրեր	Կարիերայի և պրակտիկայի բաժնի կողմից կազմակերպվում են գործատուների հետ աշխատաժողովներ:
46.	Ակտիվացնել և ընդլայնել միջազգային կառույցների և հաստատությունների հետ համագործակցությունը և դրա շրջանակը /չափանիշ 9/	Ակտիվ համագործակցություն միջազգային կառույցների և ուսումնական հաստատությունների հետ	Միջազգայնացման հաստատված ծրագիր	Առկա են համագործակցություն ֆիզիկական կուլտուրայի և սպորտի ինստիտուտների եվրոպական ասոցիացիայի, Եվրասիական երկրների մանկավարժական համալսարանների ասոցիացիայի, միջազգային օլիմպիական ակադեմիայի հետ:
47.	Իրականացնել դասախոսների և ուսանողների շարժունությանը	Դասախոսների և ուսանողների շարժունությանը նպաստող պայմաններ	Փոխանակման ծրագրերի թիվը	Այս ուղղությամբ առկա է չնչին տեղաշարժ:

	նպաստող միջազգային փոխանակման ծրագրեր /չափանիշ 9/		Շարժունությանը մասնակցած ուսանողների և դասախոսների թիվը	
48.	Բարելավել դասախոսների, ուսանողների անգլերեն լեզվի իմացության մակարդակը՝ վերանայելով դասընթացների ծրագրերը և մեթոդաբանությունը /չափանիշ 9/	Անգլերեն լեզվի և դասախոսների վերապատրաստման դասընթացների ավելացված ժամաքանակներ	Հաստատված նոր պլաններ և ծրագրեր	Ուսումնական պլաններում ավելացել են անգլերենի դասընթացները: Դասախոսական կազմի վերապատրաստման դասընթացներում նույնպես ավելացել է օտար լեզվին հատկացվող ժամաքանակը
49.	Իրականացնել որակի ապահովման հաստատված քաղաքականության և ընթացակարգերի արդյունավետության գնահատում /չափանիշ 10/	ՈԱ քաղաքականության և ընթացակարգերի արդյունավետության գնահատման մեխանիզմներ	Հրապարակված ՈԱ քաղաքականություն և ընթացակարգեր, արդյունավետության գնահատման գործիքներ: Մշակված արդյունավետության գնահատման հայեցակարգ:	Վերանայվել է որակի ներքին ապահովման քաղաքականությունը: ՈԱ ընթացակարգերի վերանայումը նախապատրաստական փուլում է, բացակայում է դրանց արդյունավետության գնահատման գործիքները, հետևապես նաև արդյունավետության վերլուծությունները:
50.	Մշակել ՀՖԿՄՊԻ-ի որակի ապահովման գործընթացների կառավարման համար տրամադրած մարդկային, նյութական և ֆինանսական ռեսուրսների գնահատման հստակ մեխանիզմներ /չափանիշ 10/	Հաստատված հստակ գնահատման գործիքներ և ընթացակարգեր	Ներքին շահակիցների բավարարվածության աստիճանը տրամադրվող ռեսուրսներից	Այս ուղղությամբ նախատեսվել և իրականացվել են որոշակի գործընթացներ, սակայն հստակ մեխանիզմներ դեռևս առկա չեն:
51.	Հստակեցել ՈԱ բաժնի գործառույթները /չափանիշ 10/	Լրամշակված կանոնադրություն՝ ՈԱ բաժնի հստակեցված գործառույթներով	Նոր կանոնադրության առկայություն ՀՖԿՄՊԻ-ի կայքում	Վերանայվել է ՈԱ բաժնի կանոնադրությունը, որը հասանելի է բուհի պաշտոնական կայքէջում: ՈԱ բաժնի աշխատակիցների համար մշակվել են պաշտոնի հրահանգներ:

52.	Ընդլայնել որակի ապահովման գործընթացներում ներքին և արտաքին շահակիցների ներգրավվածությունը և գնահատել դրա արդյունավետությունը /չափանիշ 10/	Շահակիցների ներգրավվածության և մասնակցության արդյունավետության աճ	Շահակիցների մասնակցության արդյունավետության գնահատման զեկույց	ՈԱ գործընթացներում ներքին և արտաքին շահակիցների մասնակցությունն ավելացել է, սակայն առկա չէ դրանց արդյունավետության գնահատման ընթացակարգը:
53.	Մշակել կրթության որակի ապահովմանն ուղղված կառուցվածքային և բովանդակային փոփոխությունների արդյունավետությունը գնահատող մեխանիզմներ /չափանիշ 10/	Կառուցվածքային և բովանդակային փոփոխությունների արդյունավետության գնահատումը	Հաստատված գործիքներ և ընթացակարգեր Փոփոխությունների արդյունավետության վերլուծություն	Դեռևս չի իրականացվել:
54.	Մահմանել և կիրառել տեղեկատվության հավաքագրման մեխանիզմներ, որոնք կձևավորեն անհրաժեշտ հիմքեր որակի ապահովման ներքին և արտաքին գնահատումների համար /չափանիշ 10/	Մշակված և կիրառվող հստակ տեղեկատվության քանակ և մեխանիզմներ, որոնք բավարար կլինեն որակի ապահովման ներքին և արտաքին գնահատումների համար	Հաստատված տեղեկատվության քանակ, հավաքագրման գործիքներ, Ժամանակացույց	Մեկնարկը նախատեսվում է հաջորդ տարվանից:
55.	Իրականացնել գործընթացների որակի վերաբերյալ տեղեկատվության տարածման համար կիրառվող մեխանիզմների արդյունավետության վերլուծություններ /չափանիշ 10/	Որակի վերաբերյալ տեղեկատվության տարածման կիրառվող մեխանիզմների արդյունավետության գնահատական և վերհանված բացթողումներ	Կիրառվող մեխանիզմների արդյունավետության վերլուծություն	Իրականացված չէ:

Հավելված 3. Շահակիցների հետ հանդիպման հարցաշար

Հանդիպում ռեկտորի հետ 09:15-09:30

1.	Բուհի առաքելության վերաձևակերպում՝ շահակիցների համար առավել ընկալելի դարձնելու նպատակով:
2.	ՌԾ լրամշակման գործընթացում շահակիցների ներգրավվածության ընդլայնում: ՌԾ նպատակների և խնդիրների իրականացման գնահատում:
3.	Կազմակերպական կառուցվածքի վերանայում
4.	Մարդկային ռեսուրսների կառավարման քաղաքականության մշակում
5.	Ֆինանսական հատկացումների ընդլայնում՝ ուղղված նյութատեխնիկական բազայի թարմացմանը և նորագույն սարքավորումներով հագեցմանը: Ֆինանսական ռեսուրսների բաշխման քաղաքականություն՝ ըստ ռազմավարական գերակայությունների
6.	Ռիսկերի կառավարման համակարգ

Հանդիպում պրոռեկտորների հետ 09:30-10:10

1.	Բուհի առաքելության վերաձևակերպում՝ շահակիցների համար առավել ընկալելի դարձնելու նպատակով:
2.	ՌԾ լրամշակման գործընթացում շահակիցների ներգրավվածության ընդլայնում: ՌԾ նպատակների և խնդիրների իրականացման գնահատում:

3.	Կազմակերպական կառուցվածքի վերանայում
4.	Մարդկային ռեսուրսների կառավարման քաղաքականության մշակում
5.	Ֆինանսական հատկացումների ընդլայնում՝ ուղղված նյութատեխնիկական բազայի թարմացմանը և նորագույն սարքավորումներով հագեցմանը: Ֆինանսական ռեսուրսների բաշխման քաղաքականություն՝ ըստ ռազմավարական գերակայությունների
6.	Ռիսկերի կառավարման համակարգ
7.	Միջազգային հետազոտական համագործակցության և հետազոտական ցանցի ստեղծման ուղղությամբ տարվող աշխատանքներ
8.	Առանձնահատուկ կարիքներ ունեցող ուսանողների կրթության կազմակերպման համար համապատասխան միջավայրի ստեղծում
9.	Միջազգայնացման ուղղությամբ տարվող աշխատանքներ

Հանդիպում որակի ապահովման կենտրոնի աշխատակիցների հետ 10:15-11:15

1.	Դասախոսների կարիքների վերհանման մեխանիզմների ներդրում
2.	Ուսանողների կրթական կարիքների վերհանման և գնահատման ընթացակարգերն ու մեխանիզմների կատարելագործում
3.	Դասախոսական և ուսումնառության անձնակազմի պաշտոնի անձնագրերի մշակում
4.	Ուսումնառության անձնակազմի կատարողականի գնահատում

5.	Կարիերայի կենտրոնի աշխատանքի նպատաուղղում աշխատաշուկայի կարիքների հետազոտմանը, շրջանավարտների զբաղվածության ուսումնասիրությանը և նրանց հետ կայուն հետադարձ կապի ապահովմանը
6.	Արտաքին շահակիցների հետ հետադարձ կապի մեխանիզմներ
7.	Գործատուների և միջազգային կառույցների հետ համագործակցության շրջանակի ընդլայնում
8.	ՈԱ քաժնի գործառույթների հստակեցում
9.	Որակի ապահովման գործընթացներում ներքին և արտաքին շահակիցների ներգրավվածության ընդլայնում

Հանդիպում ամբիոնների վարիչների հետ 11:20-12:20

1.	Բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերի վերջնարդյունքների տարանջատում
2.	Դասավանդման և ուսումնառության մեթոդների կապն ուսումնառության վերջնարդյունքների և գնահատման մեթոդների հետ
3.	Ակադեմիական ազնվությունն ապահովող գործիքների մշակում
4.	ՄԿԾ-ների մշակման, պարբերաբար մշտադիտարկման, դրանց իրականացման արդյունավետության գնահատման և բարելավման գործընթացներ՝ ներառելով շահակիցներին և վերհանելով աշխատաշուկայի պահանջները
5.	Ծրագրերի միջազգային բենչմարքինգ
6.	ՄԿԾ-ների մշակման միջառարկայական մոտեցումների ներդրում

7.	Դասախոսների կարիքների վերհանման մեխանիզմների ներդրում, դասախոսական կազմի մասնագիտական որակների կատարելագործման աջակցություն, ոլորտում գիտական աստիճան ունեցող դասախոսների աճի նպաստում
8.	Դասախոսական անձնակազմի պաշտոնի անձնագրերի մշակում
9.	Ներբուհական հետազոտությունների նոր առաջնահերթություններ
10.	Դասախոսների շարժունությանը նպաստող միջազգային փոխանակման ծրագրեր

Հանդիպում պրոֆեսորադասախոսական կազմի ներկայացուցիչների հետ 13:15-14:15

1.	Բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերի վերջնարդյունքների տարանջատում
2.	Դասավանդման և ուսումնառության մեթոդների կապն ուսումնառության վերջնարդյունքների և գնահատման մեթոդների հետ
3.	Դասախոսների կարիքների վերհանման մեխանիզմների ներդրում, դասախոսական կազմի մասնագիտական որակների կատարելագործման աջակցություն, ոլորտում գիտական աստիճան ունեցող դասախոսների աճի նպաստում
4.	Դասախոսների շարժունությանը նպաստող միջազգային փոխանակման ծրագրեր
5.	Անգլերենի իմացության մակարդակի բարձրացում

Հանդիպում ուսանողության ներկայացուցիչների հետ 14:20-15:20

1.	Ուսանողների կրթական կարիքների վերհանման և գնահատման ընթացակարգերի ու մեխանիզմների կատարելագործում
2.	Դասավանդման, ուսումնառության, գնահատման մեթոդներ
3.	Բավարարվածություն ռեսուրսներից
4.	Ընդգրկվածություն հետազոտական նախագծերում
5.	Ուսանողների շարժունությանը նպաստող միջազգային փոխանակման ծրագրեր
6.	Անգլերենի իմացության մակարդակի բարձրացում

Հավելված 4. Ուսումնասիրման ենթակա փաստաթղթերի ցանկ

Չափանիշ 1

1.	ՌԾ նպատակների և խնդիրների իրականացման արդյունքների արդյունավետության գնահատման չափելի ցուցիչներ
2.	Շահակիցների ներգրավման մեխանիզմների արդյունավետությունը պարբերաբար գնահատման կարգ
3.	Ներքին և արտաքին շահակիցների կարիքների վերհանման արդյունավետության գնահատման մեխանիզմների վերաբերյալ հարցումների վերլուծություն

Չափանիշ 2

1.	Կազմակերպական կառուցվածք
2.	Մարդկային ռեսուրսների կառավարման քաղաքականություն
3.	ՄՈՒՀ-ի գործունեության վրա ազդող արտաքին գործոնների վերլուծություն
4.	Կարճաժամկետ և միջնաժամկետ գործողությունների իրականացման ծրագրեր
5.	Կառավարման գործընթացներին ներքին և արտաքին շահակիցների մասնակցությունն ապահովող ընթացակարգ

6.	Բյուջեի ծախսերի նախահաշիվ՝ ըստ ռազմավարական առաջնահերթությունների
7.	Ֆինանսական ռեսուրսների բաշխման քաղաքականություն

Չափանիշ 3

1.	Բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերի վերանայված վերջնարդյունքներ
2.	Դասավանդման և ուսումնառության մեթոդների ընտրության քաղաքականություն
3.	Ուսանողների գնահատման մեթոդների ընտրության քաղաքականություն
4.	Դասընթացների ծրագրերի ձևաչափերում կառուցվածքային համապատասխանեցման քարտեզագրում, որտեղ ցույց կտրվեն ամեն մի կրթական վերջնարդյունքի ձևավորման և գնահատման մեթոդները
5.	Ակադեմիական ազնվության և էթիկայի սկզբունքներ և կանոններ, ակադեմիական ազնվությունն ապահովող գործիքներ և ընթացակարգեր
6.	ՄԿԾ-ների մշակման, մշտադիտարկման, բարելավման կարգ (փորձարկման օրինակներ)
7.	Բենչմարքինգի իրականացման քաղաքականություն և ընթացակարգեր
8.	Աշխատաշուկայի կարիքների հետազոտություն
9.	Միջառարկայական ծրագրի 1 օրինակ

Չափանիշ 4

1.	Ուսանողի ուղեցույց
2.	Շրջանավարտների և կարիերայի կենտրոնի վերանայված կանոնակարգ
3.	Ուսանողների կրթական կարիքների վերհանման վերանայված մեխանիզմներ և ընթացակարգ

Չափանիշ 5

1.	Դասախոսական կազմին ներկայացվող ընդհանուր և մասնագիտական պահանջներ
2.	Դասախոսական կազմի պաշտոնի տեղակալման նոր կարգ
3.	Դասախոսների կարիքների վերհանման մեխանիզմներ
4.	Դասախոսական և ուսումնաօժանդակ անձնակազմի պաշտոնի անձնագրեր
5.	Ուսումնաօժանդակ կազմի կատարողականի գնահատման ընթացակարգ
6.	Միջառարկայական ծրագրի 1 օրինակ

Չափանիշ 6

1.	Հետազոտական ոլորտի առաջընթացի ցուցիչներ
2.	Միջառարկայական հետազոտությունների բուհի ռազմավարությունը և ներբուհական հետազոտությունների առաջնահերթությունները
3.	Գիտահետազոտական աշխատանքների սոցիալական ազդեցության գնահատման ընթացակարգ

Չափանիշ 7

1.	Ֆինանսատնտեսական աուդիտ արդյունքների հիման վրա իրականացված բարելավումներ
2.	Կրթական ռեսուրսների արդյունավետության, կիրառելիության և հասանելիության հարցումների արդյունքների վերլուծությունները
3.	Լսարանների տարեկան զբաղվածության վերլուծություններ, դրա հիման վրա ռեսուրսների բաշխման օպիտմալացում

Չափանիշ 8

1.	Հաշվետվողականության համակարգի արդյունավետության գնահատում
2.	Արտաքին շահակիցների հետ հետադարձ կապի ֆորմալ մեխանիզմներ
3.	Հասարակության հետ հետադարձ կապի գործող մեխանիզմների արդյունավետության գնահատման ընթացակարգ

4.	Հասարակության համար ցկյանս ուսումնառության ծրագրեր սպորտի և ֆիզիկական կուլտուրայի ոլորտում
----	--

Չափանիշ 9

1.	Միջազգայնացմանը միտված քաղաքականություն
2.	Միջազգային գործունեության արդյունավետությունը գնահատող չափելի ցուցիչներ
3.	Միջազգային կառույցների և հաստատությունների հետ համագործակցությունն ընդլայնող ծրագրեր
4.	Դասախոսների և ուսանողների շարժունությանը նպաստող միջազգային փոխանակման ծրագրերի պայմանագրեր

Չափանիշ 10

1.	Որակի ապահովման հաստատված քաղաքականության և ընթացակարգերի արդյունավետության վերլուծություններ
2.	Որակի ապահովման գործընթացներին տրամադրվող ռեսուրսների գնահատում
3.	ՈԱ բաժնի վերանայված կանոնադրություն
4.	Պաշտոնի անձնագրեր ՈԱ բաժնի աշխատակիցների համար
5.	Որակի ապահովման գործընթացներում ներքին և արտաքին շահակիցների ներգրավվածության արդյունավետությունը գնահատելու ընթացակարգ

6.	Կրթության որակի ապահովմանն ուղղված կառուցվածքային փոփոխությունների արդյունավետությունը գնահատող ընթացակարգ
----	--

Մշտադիտարկումը իրականացրել են. Ա. Մակարյանը և Լ. Պիպոյանը
 Մշտադիտարկումը իրականացվել է 23.11.2018